ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մարտի 2022 թվականի N 105-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՆԱԻՐԻԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 2-ի N 32-Ն որոշման հավելվածի 6.2-րդ կետի և հիմք ընդունելով *Կ. Վարդանյանի* անձնական դիմումը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2020 թվականի փետրվարի 04-ի N 34-Ա որոշումը՝ որոշում եմ.

1. ***Կարեն Արայիկի Վարդանյանին*** 2022 թվականի մարտի 22-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատարի պաշտոնից:

2. Մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով *(տնօրենի թափուր պաշտոնում)* պաշտոնի նշանակումը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության տնօրենի հիվանդանոցային ծառայությունների գծով տեղակալ ***Գևորգ Վարդգեսի Վարդանյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2022 թվականի մարտի 22
ք. Հրազդան